Խոսրով աչս միայն կուզեր իմանալ ուստի լռեց, եւ իր ուշադրութիւնը դարձուց Գուրգէնի եւ Իշխանիկի ուշադրութեան:

— Ի՛նչ անամօթ մարդիկ են այդ յոյն երբ,— կ'ըսէր Գուրգէն,— որովհետեւ ես տարի մը չերեւեցայ, կայսեր հրովարտակաւ իմ արեանց եւ քրտնաց տրիուր պարգեւեալ Թորթում կ'ելնեն կը յափշտակե՛ն. բայց աստուած ինձ տուած է այս բազուկը, որ գիտէ ջախջախել, եւ այս սուրը, որ գիտէ յօշոտել, այս յիմարները այսչա՛փ շուտով մոռցան Գուրգէն: Վաղը ես Թորթում եմ:

— Եր՛բ եւ ո՛ւր կ'ուզես քեզի հետ եմ, կ'ըսէր Իշխանիկը, միայն իմ ղրկած ձիաւորքս յունաց բանակին ետեւեն դեռ չի դարձան:

— Այդ կը նշանակէ, որ վատ յոյները մինչեւ Կարին կը փախչին, հազարաւորի երկու հարիւր մարդու առջեւեն: Ա՛խ, հայոց ազդ, այս ինչ անէծք է քու վրադ, որ այսպիսի անարգ ու վատթար պետութեան ստրուկ եւ դերի ես դարձեր… Վաղն ուրեմն կը կարգադրենք թէ ի՞նչ պիտի ընենք,— ըսաւ Գուրգէն եւ ելաւ, եւ ամէնքը գնացին ննջելու:

Գուրգէնի գուշակութիւնը ճիշտ էր, յոյները Կարինի ճամփան առեալ կ'երթային. այս լուրը հազիւ թէ իմացաւ Բագրատունի Իշխանիկը եւ գնաց հաղորդելու Գուրգէնի, ահա հետեւակ գրաբեր մը կը հասնէր Արտանուշ գաւառեն նամակաւ, որ արտորնօք օգնութիւն կը խնդրէր արաբացի աւազակաց դէմ, որ յանկարծ մտէր երկիրը իրենց սովորական բարբարոսութեամբ ամէն չարիք կը հասցնէին գիւղացուց, եւ Սմբատաւան պաշարել էին:

Նոյն միջոցին երբ նամակը կը կարդար Իշխանիկը, Յովնան, Խոսրով եւ Աշոտ Գուրգէնի սենեակը կը մտնէին. յունաց փախուստը ամէնն էլ գիտէին:

Եւ ահա Իշխանիկը նամակը բարձրաձայն իրենց կարդաց, եւ աւելցուց.